Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-976[2]-15.09.2010-ՏՀ-010/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ օրենք) 20-րդ հոդվածում «25-ը ներառյալ» բառերը փոխարինել «20-ը ներառյալ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի նախավերջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 3 հոդվածին համապատասխան՝ ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող համարելուց դադարելու օրվա դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գումարի և հաշվի առած ԱԱՀ վճարող համարվելու վերջին հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկների արդյունքը) ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման, վերագրվում է արտադրության և շրջանառության ծախսերին: Արտադրության և շրջանառության ծախսերին վերագրված գումարի մեծության վերաբերյալ հարկ վճարողը ԱԱՀ վճարող համարվելու օրվանը հաջորդող մեկ ամսյա ժամկետում գրավոր տեղեկացնում է հարկային մարմնին: Նշված ժամկետում գրավոր տեղեկացում չստանալու դեպքում ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հարկային մարմնի կողմից հանվում է հաշվառումից՝ մինչև ԱԱՀ-ի դեբետային մնացորդի նվազեցման ենթակա գումարի մեծության հիմնավորումը:»:

Հոդված 3. Օրենքի 44.1-ին հոդվածում «Ընդ որում» բառերից հետո լրացնել «ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից դուրս գրված կամ» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը) | Առաջարկության, առարկության բովանդակությունը | Եզրակացություն |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| ՀՀ կառավարություն | Ներկայացված փոփոխությունները չի կարելի համարել ՀՀ կառավարության 21.01.2010 թիվ 97 որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 1.1.1 և 1.1.2 կետերի իրականացում, քանի որ տվյալ փոփոխություններն ազդում են տնտեսվարողների փոքր հատվածի գործունեության վրա, էականորեն չեն նվազեցնում և չեն միասնականացնում տնտեսվարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունները: Ներկայացված փաթեթը չի պարունակում բարձրացված խնդրի ամբողջական լուծում: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ի կատարումն ՀՀ վարչապետի նախագահությամբ սույն թվականի մարտի 10-ին կայացած գործարարների աջակցման խորհրդի նիստում տրված հանձնարարականի, տնտեսվարողների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվական փաստաթղթերի նվազեցման և միասնականացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ ստեղծվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ (2010 թ. մարտի 23-ի թիվ 01/16.31/1203-10 գրություն): Նախատեսվում է, որ բարձրացված խնդրի համապարփակ կարգավորման նպատակով մինչև սույն թվականի հուլիս ամիսը աշխատանքային խումբը կուսումնասիրի և կմշակի հաշվետվությունների նվազեցման և միասնականացման իրավական ակտերի ամբողջական փաթեթ: | Ներկայացված դիտողության հետ համաձայն չենք, քանի որ մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթով՝<br>• Կրճատվում է ներկայացվող հաշվետվությունների քանակը հարկային մարմինների կողմից վարչարարվող հարկատեսակների և պարտադիր վճարների մեծամասնության գծով, այդ թվում՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, ոչ ռեզիդենտների շահութահարկի, հաստատագրված վճարների, բնապահպանական և բնօգտագործման վճարների, ճանապարհային վճար, հանրային ծառայությունների կարգավորման և այլ պարտադիր վճարների:<br>• Նախնական գնահատմամբ՝ միայն արտոնագրային վճարների մասին նոր օրենսդրական փաթեթի հետևանքով մոտ 15 ԱՁ-ների համար արտոնագրային վճարներով հարկման ռեժիմին անցնելու եղանակով կտրուկ |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացված իրավական ակտերի նախագծերի փաթեթի ընդունումը համարում եմ ոչ նպատակահարմար: | դյուրացվում է նրանց հաշվետվական ռեժիմը:<br>• Օրենսդրական փաթեթով հիմքեր են ապահովվում հարկային հաշվետվությունների հետագա ավտոմատացման համար, միասնականացվում են բոլոր հարկային հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետները:<br>• ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ստեղծվող աշխատանքային խմբի առջև դրված խնդիրը կապված է ՀՀ կառավարության 21.01.2010 թիվ 97 որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 1.1.4 կետի իրականացման հետ և վերաբերվում է ընդհանրապես պետական մարմիններին ներկայացվող փաստաթղթերի նվազեցմանը: Իսկ սույն օրենսդրական փաթեթը մշակված է ի կատարումն վերոնշյալ որոշման 1.1.1 և 1.1.2 կետերի, որոնք վերաբերվում են միայն հարկային հաշվետվությունների օպտիմալացման խնդրին: |
| ՀՀ կառավարություն | 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Օրենքի նախագիծ/ 1-ին և 2-րդ հոդվածներում անհրաժեշտ է հստակ նշել, թե նախատեսված հոդվածների կոնկրետ որ մասերում են կատարվում փոփոխությունները: | Օրենքի նախագիծը վերաշարադրվել է |
| | 2. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում՝ պարբերության՝ բառն անհրաժեշտ է փոխարինել՝ մասի՝ բառով, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ կետում՝ ՝պարբերությունը՝ բառն անհրաժեշտ է փոխարինել՝ մասը՝ | Օրենքի նախագիծը վերաշարադրվել է |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | բառով՝ նկատի ունենալով՝Իրավական ակտերի մասին՝Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները: | |
| | 3. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերի կապակցությամբ հայտնում ենք, որ գործող՝Ավելացված արժեքի հարկի մասին՝Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածում՝հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դուրս գրված՝և՝մասի 1-ին կետում նշված՝բառեր նախատեսված չեն: | Օրենքի նախագիծը վերաշարադրվել է |
| ՀՀ կառավարություն | 8. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Օրենքի նախագիծ/ վերաբերյալ հայտնում ենք, որ ներկայացված նախագծերի փաթեթում առկա է երկու նմանատիպ նախագիծ, որոնցով փոփոխություններ են կատարվում հենց ՀԱվելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Ուստի առաջարկում ենք վերոհիշյալ նախագծերը միացնել իրար, քանի որ դրանք երկուսն էլ վերաբերում են ՀԱվելացվածարժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին: | Ընդունվել է, օրենքի նախագիծը վերախմբագրվել է |
| ՀՀ կառավարություն | 1. Նախագծի 2-րդ հոդվածի կապակցությամբ գտնում ենք, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածում նախագծով առաջարկվող փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով հետևյալ նկատառումները.<br>1) Օրենքի 27-րդ հոդվածում ավելացված արժեքի հարկով հարկվող եւ չհարկվող գործարքների գծով առանձնացված հաշվառում վարելու դրույթը կիրառվում է ըստ գործարքների, ինչը նշանակում է, որ հարկ վճարողը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված գործարքների մի մասի գծով (որոնց մասով հնարավոր է) կարող է վարել առանձնացված հաշվառում, իսկ մյուս մասի գծով՝ ոչ: Եվ տվյալ դեպքում, տեսակարար կշիռների մեթոդը կիրառվում է միայն այն ձեռքբերումների նկատմամբ, որոնք հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել ավելացված | Ընդունվել է, նախագծից հանվել է օրենքի 27-րդ հոդվածին վերաբերվող դրույթները |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | արժեքի հարկով հարկվող կամ չհարկվող գործարքներին: Նույն մոտեցումներն առաջարկվում են քննարկման ներկայացված նախագծով: Սակայն, խնդիրը կայանում է նրանում, որ նշյալ նախագծի ընդունումը կնշանակի, որ նախկինում կիրառվել են այլ մոտեցումներ:<br>2) Նախագծի 2-րդ հոդվածով, ըստ էության, հստակեցվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի դրույթները: Այդ կապակցությամբ, գտնում ենք, որ առավել նպատակահարմար է վերոնշյալ հոդվածի դրույթների մեկնաբանման խնդիրը լուծել պաշտոնական պարզաբանմամբ: | |